Բորիս Ղազարյան

# ՍԱՀՄԱՆԱՅԻՆ ՀԱԿԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՉԵՉՆԻԱՅԻ ԵՎ ԻՆԳՈՒՇԵԹԻԱՅԻ ՄԻՋԵՎ (XIXդ.-2018 թ.)

***Բանալի բառեր.*** Չեչնիա, Ինգուշեթիա, սահմանային բաժանում, հակասություններ, Բաթումի միջազգային կոնֆերանս, Լեռնային Հանրապետություն, Լեռնային ԻՍՍՀ, վարչական բաժանում, վայնախ ժողովուրդ, ինքնավարություն, ՌՍՖՍՀ, Խորհրդային Միություն, սահմանների մասին համաձայնագիր:

## 1. Մեկ ընդհանուր պետականությունից մինչև էթնիկ ինքնավար միավորների ստեղծում:

XIX դարի կեսերին Հյուսիսային Կովկասում Ռուսական Կայսրության ամրապնդումից և երկարատև Կովկասյան պատերազմներից, Կովկասյան լեռնաբնակների կազմավորած Հյուսիսկովկասյան Իմամության անկումից և 1917 թ. փետրվարյան և հոկտեմբերյան հեղափոխություններից հետո պետություն ստեղծելու նորովի հնարավորություն առաջացավ, և սա պետականություն ստեղծելու լուրջ շրջան էր Հյուսիսկովկասյան ժողովուրդների համար:

Անհրաժեշտ է նշել, որ Հյուսիսկովկասյան Իմամության գոյության ժամանակ և հենց նույնիսկ իմամ Շամիլի (1834-1859 թթ.) կառավարման շրջանում իմամության՝ որպես պետության մասին կարելի է խոսել վերապահումներով: Իմամության տարածքի ուրվագծերը և չափսերը հաճախակի ենթարկվում էին փոփոխությունների կախված ռազմական հաղթանակներից և պարտություններից, որի արդյունքում իմամության սահմանները բավականին շարժական էին, իսկ կառավարման համակարգի կառուցվածքը փոփոխական, քանի որ դրա կայունությունը շատ տեղերում կախված էր հենց անձամբ Շամիլի և իր նաիբների տարբեր էթնոազգային խմբերին զենքի ուժով իրենց կամքին ենթարկելուց: Ինչպես հայտնի է Շամիլի իմամության առավելագույն ընդարձակման շրջանում վերջինիս մեջ մտնում էր միայն Չեչնիայի և Դաղստանի մի մասը, բացառությամբ դարգիններով, կումիկներով, լեզգիներով, թաբասարանցիներով, և լակերով բնակեցված տարածքներով:

Սա վկայում է այն մասին, որ Հյուսիսային Կովկասի ոչ բոլոր լեռնային ժողովուրդներն ունեին Շամիլի իշխանությունը ընդունելու մեծ ցանկություն, և հետևաբար պարզ է, որ իմամը բազմիցս է դիմել զենքին և ռազմական ուժին վերջիններիս հնազանդեցնելու համար: Հատկապես համառ պայքար էր մղվում այն ուժերի դեմ, որոնք հրաժարվում էին ընդունել շարիաթը և լինել դրանց կրողը[1]:

Ընդհանուր առմամբ Հյուսիսկովկասյան Իմամությունը գոյություն էր ունեցել ավելի քան 30 տարի՝ 1829-1863 թթ., որը երկարատև կովկասյան պատերազմներից հետո վերջնականապես միացվեց Ռուսական Կայսրության Թերեքի և Դաղստանի մարզերին:

Ինչպես նշվեց՝ հաջորդ ինքնուրույնության հասնելու լուրջ փորձերը եղան 1917 թ. փետրվարյան հեղափոխությունից հետո, որը հոկտեմբերյան հեղափոխությունից հետո ձևափոխվեց պետականության ստեղծման և կառուցման հստակ քայլերի:

Ասյպիսով 1917 թ. մայիսին Վլադիկավկազ քաղաքում տեղի ունեցավ Հյուսիսային Կովկասի լեռնականների առաջին համագումարը, որին մասնակցություն ունեցան Դաղստանի ժողովուրդների, չեչենների, ինգուշների, չերքեզների, կաբարդինցիների և այլ ազգերի ներկայացուցիչները: Համագումարի ընթացքում հայտարարվեց Հյուսիսային Կովկասի և Դաղստանի լեռնականների միացյալ խորհրդի ստեղծման մասին, նաև ստեղծվեց Կովկասի լեռնականների Կենտրոնական գործադիր կոմիտեն, որն իրենից ներկայացնում էր գործադիր մարմին: Կոմիտեի ծրագրերի մեջ մտավ Ռուսաստա-

[1] Տե՛ս Гаджиев К., Геополитика Кавказа, М., 2003, с. 32.

նը վերածել ֆեդերալ (դաշնային) հանրապետության, որի մասը պետք է դառնար Հյուսիս-Կովկասյան խորհուրդը:

Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո կենտրոնական գործադիր կոմիտեն հրաժարվեց ընդունել բոլշևիկյան կառավարությանը և իր ձեռքում կենտրոնացրեց ողջ գործադիր իշխանությունը Հյուսիս-Կովկասյան խորհրդի ամբողջ տարածքում այնքան ժամանակ, մինչև կիրավիրվեր հիմնադիր ժողովը: Այս կերպ խորհուրդը իրեն հայտարարում էր միջազգային իրավունքի սուբեկտ, որպես անկախ Հյուսիս-Կովկասյան պետություն, որը ռազմական և տնտեսական ամուր կապերով պետք է կապված լիներ Թուրքիայի և կենտրոնական Եվրոպայի պետությունների հետ[1]:

1918 թ. մայիսի 11-ին Բաթումի միջազգային կոնֆերանսում հայտարարվեց Լեռնային Հանրապետության ստեղծման և վերջինիս Օսմանյան Թուրքիայի և Գերմանիայի կողմից ճանաչման մասին: Այդ օրը կոնֆերանսում հռչակվեց «Հյուսիսային Կովկասի և Դաղստանի լեռնականների խորհրդի հանրապետության (Լեռնային Հանարապետության) անկախության հռչակագիրը»[2]:

Այստեղ հարկ է նշել, որ մինչև Բաթումի միջազգային կոնֆերանսը Հյուսիսային Կովկասի ներկայացուցիչները ժամանել էին Թիֆլիս, որտեղ վերջիններս հանդիպելով Անդրկովկասի հանրապետությունների քաղաքական բարձր օղակների, ինչպես նաև Վրաստանի այլ ազդեցիկ կուսակցությունների ներկայացուցիչների հետ, բանակցություններ էին վարել Կովկասի երկու մասերի միավորման հարցերի շուրջ[3]:

Իրադրությունը լրջագույնս փոխվեց հաջորդ՝ 1919 թ. ամռանը: Կարմիր բանակի կողմից Հեռավոր Արևելքում ծովակալ Կոլչակի ուժերի ջախջախումից հետո, Ռուսաստանի հարավում գեներալ Դենիկինը դարձավ Ռուսաստանում Խորհրդային իշխանության դեմ պայքարող միակ գլխավոր ուժը: Գեներալ-մոնարխիստին այս ընթացքում հաջողվել էր փաստացիորեն լիկվիդացնել Լեռնային Հանրապետությանը, չնայած այն բանին, որ հանրապետությունն իրեն օգնում էր բոլշևիկյան իշխանությունների դեմ պայքարում, սակայն Դենիկինը չէր ընդունում ոչ ռուս ազգերի ինքնուրույնության ձգտումները և հանդես էր գալիս «Միացյալ Ռուսաստանը անբաժան է» դրոշի ներքո:

Անհրաժեշտ է նաև նշել կարևոր այն փաստը, որ մինչև Հյուսիսային Կովկասից Դենիկինի Կամավորական բանակի դուրսմղումը, բոլշևիկները առանձնակի ուշադրության էին արժանացրել Հյուսիսային Կովկասի ժողովուրդների միջազգային հարաբերությունները, ազգային պետականության կառուցման և ազգային քաղաքականության հարցերը: Իշխանության գալուց հետո, բոլշևիկներն որպես հակակշիռ «անկախ» Լեռնային Հանրապետությանը, հապճեպորեն հռչակեցին Հյուսիսային Կովկասի ժողովուրդների Ինքնավար Խորհրդային Հանրապետությունները (Դաղստանի և Լեռնային ԻԽՍՀ) ՌՍՖՍՀ կազմում[4]:

Այսպիսով բոլշևիկյան ազգային քաղաքականության արդյունքն եղավ այն, որ 1921 թ. հունվարի 20-ին Համառուսաստանյան Կենտրոնական Գործադիր Կոմիտեի կողմից հռչակված դեկրետի համաձայն՝ Հյուսիսային Կովկասում կազմավորվեց Ինքնավար Լեռնային Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունը:

Ըստ դեկրետի՝ նոր կազմավորված ինքնավար հանրապետությունը բաժանվում էր թվով վեց վարչական շրջանների՝օկրուգների, որոնք հետագայում վերածվեցին ազգային շրջանների: Այսպիսով այս շրջաններն էին.

1. Չեչենական շրջան (նախկին Բեկինսկի և Գրոզնիի շրջաններ, Ղզլարի առանձին շրջանի աջակողմյան հատվածը և նախկին Սունջայի առանձին շրջանի արևելյան հատվածը,

2. Ինգուշական օկրուգ (Նազրանի շրջան),

---

[1] Տե՛ս Дзидзоев В., От сепаратизма к советской автономии народов Северного Кавказа: исторически опыт (1917-1921). Россия и Кавказ: история и современность, Владикавказ, 2004, с 139-140.

[2] Տե՛ս Тахо-Годи А., Революция и контрреволюция в Дагестане, Махачкала, 1927. с. 61.

[3] Տե՛ս Дзидзоев В, նշվ. աշխ., с. 140.

[4] Նույն տեղում էջ, 157-158:

3. Օսական օկրուգ (Օսական և նախկին Սունջայի առանձին շրջանի արևմտյան հատվածը),

4. Կաբարդինական օկրուգ (նախկին Նալչիկի շրջանի հյուսիսային մասը),

5. Բալկարական օկրուգ (նախկին Նալչիկի շրջանի հարավային հատվածը),

6. Կարաչևյան օկրուգ (նախկին Նալչիկի շրջանի արևմտյան հատվածը, նախկին Կուբանի մարզի Բաթալփաշյան առանձին շրջանի Պյատիգորսկի հարավային հատվածը):

Նոր ձևավորված Ինքնավար Լեռնային Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության կենտրոնը դարձավ Վլադիկավկազ քաղաքը[1]:

Ինչպես երևում է վերոնշյալից, դեկրետում հստակորեն առանձնացվում էին ԻԼԽՍՀ վարչական շրջանների տարածքները և սահմանները: Հստակեցված էր Չեչնիայի և Ինգուշեթիայի շրջաններին տրվող տարածքները: Պետք է նշել, որ Ռուսական քաղաքացիական պատերազմի դեռևս չավարտված ժամանակաշրջանում ԻԼԽՍՀ կազմավորումը ՌՍՖՍՀ կազմում առաջին քայլն էր Հյուսիսային Կովկասում վերահսկողություն հաստատելու ուղղությամբ:

1922 թ. նոյեմբերի 30-ին Համառուսաստանյան Կենտրոնական Գործադիր Կոմիտեի դեկրետի համաձայն՝ Չեչնիան հանվում է ԻԼԽՍՀ-ի կազմից և առանձնացվում է որպես ինքնավար մարզ Գրոզնի քաղաքով[2]:

Իսկ 1924 թ. հուլիսի 7-ին վերացվեց ԻԼԽՍՀ-ն, և վերջինիս տարածքում կազմավորվեց Հյուսիսային Օսիայի ինքնավար մարզը, Ինգուշական ինքնավար մարզերը և Սունջայի շրջանը: Վլադիկավակազ քաղաքը առանձնացվեց որպես ինքնուրույն վարչական միավոր: Ինգուշական ինքնավար մարզի տարածքում բացի ժամանակակից Ինգուշեթիայի տարածքից ներառվում էին նաև որոշակի տարածքներ այժմյան Հյուսիս Օսական Հանրապետության տարածքներից:

Ինգուշեթիայի սահմաններն այդ հատվածում մոտենում էին Վլադիկավկազ քաղաքի արևելյան, հարավային և մասամբ նաև հյուսիսային հատվածներին: Վլադիկավկազ քաղաքը, որն ընկած էր Թերեք գետի երկու ափերին ինչպես նշվեց համարվում էր ինքնուրույն վարչական միավոր, սակայն Ինգուշական և Օսական ինքնավար մարզերի վարչական մարմինները գտնվում էին այդ քաղաքում: Այս իրավիճակը պահապանվեց մինչև 1934 թ. հունվարի 15-ը, երբ Չեչնիան և Ինգուշեթիան միավորվեցին մեկ ինքնավար մարզի մեջ և կազմեցին Չեչենո-Ինգուշական Ինքնավար մարզը Գրոզնի մայրաքաղաքով: Այս ամենից հետո Վլադիկավկազ քաղաքն ամբողջությամբ դարձավ միայն Հյուսիսային Օսիայի Ինքնավար Մարզի վարչական կենտրոն, իսկ վերջինիս շուրջ գտնվող ինգուշական հողերը միացվեցին Չեչենո-Ինգուշական ինքնավար մարզին, որը 1936 թ. դեկտեմբերի 5-ին ձեռք բերեց ինքնավար հանրապետության կարգավիճակ[3]:

1942-1943 թթ. գերմանական-ֆաշիստական զորքերին Հյուսիսային Կովկասից վտարելուց հետո Խորհրդային կառավարությունը բոլոր չեչեններին և ինգուշներին մեղադրեց դավաճանության մեջ և 1944 թ. փետրվարին ձեռնամուխ եղավ վայնախ ժողովրդի արտաքսման կազմակերպմանը: Դեպի Կենտրոնական Ասիա և մասամբ Ալթայ արտաքսվեցին 400 հազար չեչեն և 90 հազար ինգուշ: Նույն թվականի մարտի 7-ին ԽՍՀՄ Գերագույն Խորհրդը որոշում ընդունեց «Չեչենո-Ինգուշական Ինքնավար Հանրապետության լուծարման և վերջինիս տարածքի վարչական կառուցվածքի մասին»: Վայնախների արտաքսման հիմնական պատճառ կարելի է ասել հանդիսացավ 1940 թ. Չեչնիայի տարածքում բարձրացած ապստամբությունը Խորհրդային կառավարության դեմ, որն ընդգրկել էր հանրապետության ողջ լեռնային շրջանները: Այսպիսով վայ-

---

[1] Տե՛ս Сборник важнейших постановлений и распоряжений Всероссийского Центрального Исполнительного Комитета VIII-го созыва: об Автономной Горской Социалистической Советской Республике, М., 1921, с. 32-34.

[2] «Всероссийский Центральный Исполнительный Комитет. Об образовании Автономной Области Чечни»,
http://www.ussrdoc.com/ussrdoc_communizm/ussr_1451.htm

[3] Տե՛ս Анчабадзе Г., Вайнахи (чеченцы и ингуши), Тбилиси, 2001, с. 59.

նախներին արտաքսելով և ինքնավար հանրապետությունը լուծարելով Խորհրդային կառավարությունը փորձում էր ընդհանրապես Կովկասից վերացնել Չեչենո-Ինգուշետիան որպես այդպիսին:

Չեչենո-Ինգուշեթիայի տարածքը բաժանվեց չորս անհավասար մասերի. գրեթե ամբողջ Ինգուշեթիան միացվեց Հյուսիսային Օսիայի ԻԽՍՀ-ին, Չեչնիայի արևելյան տարածքները մտցվեցին Դաղստանի ԻԽՍՀ կազմ, հարավային բարձր լեռնային շրջանները՝ Վրացական ԽՍՀ կազմ, իսկ հյուսիսային ու կենտրոնական շրջանները Գրոզնիի շրջան անունով մտցվեցին ՌՍՖՍՀ Ստավրոպոլի երկրամասի կազմ: Արագորեն փոխվեցին նաև բնակավայրերի վայնախյան անվանումները, ոչնչացվեցին մշակույթի նյութական հուշարձանները: Բաժանվեց ամեն ինչ, որպեսզի հնարավորինս արագ մոռացվեն և՛ չեչենները, և՛ ինգուշները[1]:

Այնուամենայնիվ 1957 թ. հունվարի 9-ին ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի որոշումով վերականգնվեց Չեչենո-Ինգուշական Ինքնավար Հանրապետությունը ՌՍՖՍՀ կազմում, որի հետ միաժամանակ որոշման երրորդ կետով թույլատրվեց նաև չեչենների և ինգուշների վերադարձը նախկին բնակավայրեր[2]:

Սակայն կարևոր է նշել, որ Չեչենո-Ինգուշական ԻԽՍՀ-ն վերականգվեց որոշակի սահմանների փոփոխություններով: Վլադիկավկազ քաղաքի շուրջ եղած ինգուշական տարածքները կամ այսպես ասած Պրիգորոդնի շրջանը և Մալգոբեկ քաղաքից արևմուտք ընկած տարածքի հատվածը մնացին Հյուսիսային Օսիայի ԻԽՍՀ կազմում, բայց փոխարենը ԻԽՍՀ-ն ստացավ Թերեք-Կումսկյան ցածրադիր շրջանները Թերեք գետի ձախ ափերին, այնտեղ գտնվող կոզակյան ստանցիաներով[3]:

Նման տեղափոխությունների արդյունքում և՛ Ինգուշեթիան, և՛ Չեչնիան կորցրեցին սեփական էթնիկ ինքնավար միավոր ունենալու հնարավորությունը:

Չհաշված որոշակի ելույթներին ԻԽՍՀ-ի տարածքում, այնուամենայնիվ մինչև 1990 թ. ընկած ժամանակահատվածը համարվում է ամենահանգիստ շրջանը Չեչենո-Ինգուշական ԻԽՍՀ պատմության մեջ:

## 2.Սահմանների հաստատման փորձեր:

1980-ական թթ. ԽՍՀՄ վերակառուցմանը զուգահեռ Չեչենո-Ինգուշական ԻԽՍՀ-ում ակտիվացան ազգայնական տրամադրությունները: 1991 թ. սեպտեմբերի 6-ին Չեչենո-Ինգուշական ԻԽՍՀ Գերագույն Խորհուրդը լուծարվեց, և իշխանությունն անցավ Չեչեն ժողովրդի Համազգային Կոնգրեսին, որը և հայտարարեց Չեչենական Իչկերիա Հանրապետության Ռուսաստանից անկախանալու մասին[4]:

Նորանակախ հանրապետության նախագահ դարձավ անջատողականների առաջնորդ և ԽՍՀՄ ռազմաօդային ուժորի գեներալ Ձախար Դուդաևը, որը և 1991 թ. նոյեմբերի 1-ին ստորագրեց հանրապետության անակախության մասին հրամանագիրը: Սակայն Չեչնիայի ՌՍՖՍՀ-ից անկախանալու ձգտումը աջակցություն չգտավ ինգուշ բնակչության մոտ և 1991 թ. Նոյեմբերի 30-ին ինգուշական տարածքներում անցկացվեց հանրաքվե, որի արդյունքում բնակիչները կողմ քվեարկեցին Ինգուշական Հանրապետության կազմավորմանը ՌՍՖՍՀ կազմում: Փաստացիորեն Չեչենո-Ինգուշական ԻԽՍՀ-ն բաժանվեց Չեչնիայի և Ինգուշեթիայի, սակայն այս ամենի հետ մեկտեղ հանրապետությունների միջև վարչական սահմաններ չդրվեցին[5]:

Հաջորդ տարում՝ 1992 թ. հունիսի 4-ին ՌԴ նախագահ Բորիս Ելցինը ստորագրեց «Ռուսաստանի Դաշնության կազմում Ինգուշական Հանրապետության կազմավորման մասին» օրենքը, որով Ինգուշական Հանրապետության կազմավորման անցումային շրջանը համարվում էր մինչև 1994 թ. մարտ ամիսը: Հատկանշական է այն փաստը, որ

---

[1] Анчабадзе Г., նշվ.աշխ., էջ 63-64:

[2] Президиум Верховного Совета СССР: «О восстановлении Чечено-Ингушской АССР в составе РСФСР», http://www.ussrdoc.com/ussrdoc_communizm/ussr_5159.htm

[3] Анчабадзе Г., նշվ.աշխ., էջ 65:

[4] Տե՛ս Фортунатов В, История, СПб, 2012, с. 437-438.

[5] «История вопроса о границе между Чечней и Ингушетией», https://tass.ru/info/5679906

այս ժամանակ կրկին չէր հստակեցվում երկու հանրապետությունների միջև սահմանային գիծը[1]:

Առաջին փորձերը հանրապետությունների միջև սահմանների հաստատմանն ուղղված եղավ չեչեններով և ինգուշներով խառը բնակեցված շրջաններում 1993 թ.:

Այդ ժամանակ չճանաչված Չեչենական Իչկերիայի Հանրապետության առաջնորդ Ձախար Դուդաևը և Ինգուշեթիայի Հանրապետության առաջին նախագահ Ռուսլան Աշուևը ստորագրեցին պայմանագիր, որի համաձայն Սունջայի շրջանի մեծ մասը բացառությամբ Սեռնավոդսկ և Ասսինովսկա բնակավայրերի մնացին Ինգուշեթիայի կազմում: Այնուամենայնիվ այս փաստաթուղթը համարվեց անօրինական[2]:

1994-1996 թթ. առաջին չեչենական պատերազմի արդյունքում 1996 թ. օգոստոսի 31-ին ՌԴ Անվտանգության խորհրդի քարտուղար Ալեքսանդր Լեբեդի և չեչենական Իչկերիա հանրապետության նախագահ Ասլան Մասխադովի միջև Դաղստանի Խասավյուրտ քաղաքում ստորագրված համաձայնագրով չեչնիան փաստացի անկախություն էր ստանում: Ըստ համաձայնագրի՝ ՌԴ նախագահի հրամանով սահմանված ժամկետներում ռուսական զորքը դուրս էր բերվելու ողջ Չեչնիայի տարածքից: Համաձայնագրում նշվում էր նաև ՌԴ-ի և Չեչենական Հանրապետության միջև հարաբերությունների կարգավորման գործընթացը պետք է ավարտվեր 2001 թ. դեկտեմբերի վերջին[3]:

Այսպիսով Տարածքային պահանջները սկիզբ առան 1997 թ., երբ Չեչենական Իչկերիայի Հանրապետության ղեկավարումը շարունակում էր իրականացնել Ասլան Մասխադովը: Այդ ժամանակաշրջանում Գրոզնիում քննադատեցին ինգուշական իշխանություններին Սունջայի շրջանում՝ չեչենական տարածքի խորքում, ոստիկանական դիտակետերի տեղադրման համար, որից հետո դրանք հետ քաշվեցին[4]:

Երկու հանրապեությունների միջև սահմանների հստակեցման մեկ այլ փորձ եղավ 2003 թ. մարտի 10-ին, երբ Չեչնիայի Հանրապետության ղեկավար Ահմադ Կադիրովը և Ինգուշեթիայի նախագահ Մուրադ Զյազիկովը ստորագրեցին հուշագիր, որտեղ կողմերը համաձայնության եկան Չեչնիայի տարածքում գտնվող Սունջայի շրջանի շուրջ՝ իր երկու Սեռնավոդսկ և Ասսինովկա բնակավայրերով, իսկ Սունջայի շրջանի մնացաց տարածքը մնում էր Ինգուշեթիայի իրավասության ներքո: Տվյալ հուշագիրն իրենից ներկայացնում էր 1993 թ. Ռ. Աշուևի և Ձ. Դուդաևի միջև պայմանագրի կրկնությունը:

Սակայն հուշագրի ստորագրումով այնուամենայնիվ չէր հստակեցվում երկու ինքնավարությունների սահմանները[5]:

2008 թ. ՌԴ-ի կողմից ընդունվում է «Ինգուշեթիայի Հանրապետության և Չեչնիայի Հանրապետության տեղական ինքնակառավարման կազմակերպման միջոցների մասին» օրենք, որը լայն հնարավորություններ էր տալիս երկու հանրապետություններին տարածքները հստակեցնելու և մունիցիպալ կազմավորումների սահմանները հաստատելու կազմակերպման գործում[6]:

Տվյալ օրենքի ընդունունումը կարելի է նաև ասել, որ ինչ որ չափով կապված էր Դ. Մեդվեդևի նույն տարում ՌԴ նախագահ ընտրվելու հետ, ով ձգտում էր բավականին արագ վերացնել Ռուսաստանի առջև ծառացած ներքին հակասություններն, առավել ևս ինքնավարությունների շրջաններում:

Այսպիսով նույն տարում սահմանները հաստատվեցին, և կազմակերպվեցին ընտրություններ, որոնք անցկացվեցին Ինգուշեթիայի Սունջայի շրջանում (Սունջա կենտրոնով) և Չեչնիայի համանուն շրջանում Սերնովոդսկ կենտրոնով:

---

[1] «Об образовании Ингушской Республики в составе Российской Федерации», http://docs.cntd.ru/document/901607658

[2] «История вопроса о границе между Чечней и Ингушетией», https://tass.ru/info/5679906

[3] Տե՛ս Независимая газета, N163, 3 сентября 1996: «Принципы определения основ взаимоотношений между Российской Федерацией и Чеченской Республикой».

[4]«Территориальные споры между Ингушетией и Чечней», https://www.kavkaz-uzel.eu/articles/223104/

[5] «История вопроса о границе между Чечней и Ингушетией», https://tass.ru/info/5679906

[6] Федеральный Закон РФ «О мерах по организации местного самоуправления в Республике Ингушетия и Чеченской Республике», http://docs.cntd.ru/document/902118338

Իրադրությունը շատ արագ փոխվեց հաջորդ տարում՝ 2009 թ., երբ Չեչնիայի խորհրդարանի կողմից ընդունվեց և Ռ.Կադիրովի կողմից ստորագրվեց Սունջայի շրջանի և բնակավայրերի մասին օրենքը (Այսուհետ՝ Օրենք): Նոր ընդունված օրենքի 3-րդ կետի համաձայն՝ Չեչնիայի իրավասության տակ էին անցնում Ինգուշեթիայի Հանրապետության Սունջայի շրջանի Քարաբուլաղ քաղաքը, Նեստերովսկոյե, Սլեպցովսկոյե և այլ խոշոր բնակավայրեր: Օրենքի 4-րդ հոդվածով նաև սահմանավում էր Սունջայի շրջանի մունիցիպալ սահմանների բաժանումը[1]: Հետագայում վերոնշյալ օրենքում 2010, 2012, 2013 թթ. կատարվեցին լրացումներ և փոփոխություններ, որոնք հանգեցրեցին բուռն արձագանքների Ինգուշեթիայում:

2012 թ. Չեչնայի նախագահ Ռ.Կադիրովը հայտարարեց այն մասին, որ մտադիր է սահմանային խնդրի քննարկումները բարձրացնել դաշնային մակարդակի: Կադիրովը նաև հայտարարեց այն մասին, որ Գորագորսկի շրջանում տեղի է ունեցել միակողմանի սահմանի հաստատում, որի արդյունքում նախկինում Չեչնիայից մասնատված տարածքներից զատ հավելյալ վերցվում են հարյուրավոր և հազարավոր հեկտարներ: Կադիրովն իր հայտարարությունում նաև ավելացրեց, որ Սունջայի շրջանը և Մալգոբեկյան շրջանի մեծ մասը համարվում են Չեչնիայինը: Նման հայտարարությունը բնականաբար չէր կարող իր բացասական արձագանքը չունենար Ինգուշեթիայի ղեկավարության և բնակչության շրջանում: Նույն թվականի մարտի 12-ին Ինգուշեթիայի նախագահ Յունուս-Բեկ Եվկուրովը հանրապետության բնակչությանն ուղղված հեռուստաելույթում հայտարարեց, որ Սունջայի շրջանը համարվում է Ինգուշետիայի մաս[2]:

Իրադրությունը երկու հանրապետությունների միջև էլ ավելի սրվեց 2013 թ. ապրիլին, երբ Չեչնիայից մոտավոր 300 ուժայիններ մտան ինգուշական Արշտի բնակավայր, որի արդյունքում բնակավայրում տեղի ունեցավ բախում ինգուշ հատուկ ջոկատայինների և չեչենական ուժերի միջև: Հարկ է նշել, որ Արշտի բնակավայրը գտնվում էր Չեչնիայի տարածքային պահանջների շրջանում: Չեչենական կողմի պնդմամբ ուժայինների մուտքը բնակավայր պայմանավորված էր եղել հատուկ գործողության իրականացմամբ, որի նպատակն եղել էր ահաբեկիչ Դախու Ումարովին հայտնաբերելը, սակայն Ինգուշեթիայի անվտանգության խորհրդի կարծիքով ուժայինների ժամանման իրական պատճառը բնակավայրում ցույց կազմակերպելն էր[3]:

Տարածքային խնդիրների լուծված չլինելը կրկին խդիրներ է առաջացնում 2018 թ. օգոստոսին, երբ փորձ կատարվեց ճանապարհային դիտակետ տեղադրել չեչենական Բամուտ և ինգուշական Արշտի բնակավայրերի միջև: Խնդիրն էլ ավելի խորացավ չեչենական կողմից նախաձեռնված ճանապարհաշինարարության ժամանակ, որը պետք է կապեր Չեչնիայի և Ինգուշեթիայի լեռնային շրջանները Սունջայի շրջանի հետ: Առաջացած խնդիրները կարգավորելու համար տեղի ունեցան հանդիպումներ Յ. Եվկուրովի և Ռ.Կադիրովի միջև, որի հետևանքով որոշվում է հստակեցնել սահմանային գիծը:

Այսպիսով բանակցությունների արդյունքում 2018 թ. սեպտեմբերի 26-ին Ինգուշեթիայի մայրաքաղաք Մագասում հանրապետությունների ղեկավարներ Ռ.Կադիրովի և Յ. Եվկուրովի միջև Հյուսիսկովկասյան Դաշնային Շրջանի ՌԴ նախագահի լիազորված ներկայացուցիչ Ա. Մատովնիկովի ներկայությամբ ստորագրվում է «Չեչենական Հանրապետության և Ինգուշեթիայի Հանրապետության միջև սահմանների հաստատման մասին» համաձայնագիրը»[4]:

---

[1] Закон Чеченской Республики «Об образовании муниципального образования Сунженский район и муниципальных образований, входящих в его состав, установлении их границ и наделении их соответствующим статусом муниципального района, городского и сельского поселения», http://docs.cntd.ru/document/819091265

[2] «Чечня хочет поднять на федеральном уровне вопрос границы с Ингушетией», https://ria.ru/society/20120826/731123152.html

[3] «Чеченские и ингушские силовики подрались на границе», https://www.bbc.com/russian/russia/2013/04/130419_ingushetia_chechen_forces

[4] «Юнус-Бек Евкуров и Рамзан Кадыров подписали соглашение об установлении границы между Ингушетией и Чечней»,

Ըստ համաձայնագրի կողմերը պայմանավորվում են հանրապետությունների միջև հաստատել սահմանն ըստ պայմանագրում նշված քարտեզագրական կորդինատների, որտեղ նաև տրված էր հստակ սահմանազատման քարտեզը: Ըստ համաձայնագրում նշված սահմանազատման գծի, այն իր մեջ չէր ներառում որևե կողմի բնակավայրերը, բայց փոխանակման էին ենթարկվելու Չեչնիայի և Ինգուշեթիայի անբնակ լեռնային և անտառային հատվածները: Այսպիսով Ինգուշեթիային էին անցնում Չեչնիայի Նադտերեչնի շրջանի որոշ հատվածներ, իսկ Ինգուշեթիան իր հերթին Չեչնիային էր զիջում համապատասխան լայնքով հատված Սունջայի շրջանում[1]:

Հոկտեմբերի 4-ին հանրապետությունների խորհրդարանները վավերացրեցին համաձայնագիրը: Համաձայնագրի վավերացումը և ստորագրումը Ինգուշեթիայի մայրաքաղաք Մագասում հանգեցրեց մասսայական բողոքի ակցիաների ինգուշ բնակչության շրջանում, չնայած ղեկավարության կողմից արվող հայտարարություններին, որ հանրապետությունների միջև կնքվել է հավասար համաձայնագիր, այնուամենայնիվ դժգոհությունների ալիքը գնալով էլ ավելի խորացավ: Հիմնական դժգոհությունները կապված էին նախ այն բանի հետ, որ Ինգուշեթիայի և Չեչնիայի ղեկավարությունները համաձայնագրի կնքման մասին բնակչությանը չէին հաղորդել, երկրորդ՝ բողոքարարները կասկածում էին համաձայնագրի հավասար լինելու վերաբերյալ, և վերջապես երրորդ՝ նախքան նման համաձայնագրի կնքումը ըստ բողոքարարների պետք է անցկացվեր հանրաքվե: Բողոքի ակցիաների արդյունքում որոշվեց համաձայնագիրը վերանայել Ինգուշեթիայի Հանրապետության Սահմանադրական Դատարանում, ինչպես նաև որոշվեց հրավիրել համաինգուշական կոնգրես: Այսպիսով հոկտեմբերի 30-ին Ինգուշեթիայի Սահմանադրական Դատարանը որոշում կայացրեց այն մասին, որ համաձայնագիրը չի համապատասխանում Ինգուշեթիայի Հանրապետության սահմանադրությանը, ինչպես նաև նույն որոշումում ասվում էր, որ նման համաձայնագիրը կարող է կնքվել միայն համապատասխան հանրաքվե անցկացնելուց հետո[2]:

Չնայած դժգոհությունների լուրջ ալիքին և Սահմանադրական Դատարանի որոշմանը, այնուամենայնիվ համաձայնագիրը գործեց, որը կարելի է միայն վերապահումներով ասել, որ լուծեց սահմանային խնդիրները, քանի որ այն լիովին չի համընկնում ինգուշ ժողովրդի կամքին, որը լի է վայնախ ժողովրդի միջև հակասությունների սրմամբ՝ ընդհուպ մինչև ռազմական առճակատում: Մյուս մասով սահմանային խնդրի և համաձայնագրի կնքումը կարելի է ասել, որ համահունչ է երկու հանրապետությունների ղեկավարությունների շահերին: Համաձայնագրի կնքումով ինգուշական կողմը հնարավորություն էր ստանում հասնելու Չեչնիայի կառավարության կողմից 2009 թ. Սունջայի շրջանի մասին օրենքի վերացմանը, քանի որ հստակ սահմանների առկայությունը համաձայնագրում թույլ չէր տա Չեչնիային այլևս պահանջներ ներկայացնել ինգուշական այս կամ այն բնակավայրերի նկատմամբ, իսկ չեչենական կողմը նման համաձայնագրով բացի այն, որ ստանում էր հստակ սահմաններ, նաև հնարավորություն էր ձեռք բերում ստանալ իր համար կարևոր ռեսուրսներով հարուստ տարածքներ, որի մեջ նաև բողոքարների շրջանում խոսվում էր նավթի մասին:

Այսպիսով չնայած բազմաթիվ փորձերին տարբեր պատճառներով Հյուսիսային Կովկասում հնարավոր չեղավ ստեղծել մեկ միասնական պետություն, իսկ հետագայում Խորհրդային Միության վարած քաղաքականությունը տրածաշրջանում Հյուսիսկովկասյան ժողովուրդներին հստակորեն տարանջատեց՝ վերջիններիս ինքնավարություն շնորհելով: Փոփոխվող վարչական քաղաքականությունը Չեչնիայի և Ինգուշեթիայի

---

http://www.ingushetia.ru/news/yunus_bek_evkurov_i_ramzan_kadyrov_podpisali_soglashenie_ob_ustanovlenii_granitsy_mezhdu_ingushetiey/

[1] «Соглашение об установлении границы между Республикой Ингушетия и Чеченской Республикой», http://www.pravitelstvori.ru/upload/ilovepdf_merged.pdf

[2] «30 октября 2018 года в 14 часов состоялось оглашение решения Конституционного Суда РИ по запросу группы депутатов Народного Собрания РИ о проверке конституционности Закона РИ от 04 октября 2018 года №42-РЗ»,http://ksri.ru/ ?p=3350&fbclid=IwAR2s6KbBq8QHFXwphrAEsCa1bDqzorrAu9YY0o7iElG9E532Wj5mXqM_Uvg

նկատմամբ (հանրապետություններին միացնելով և անջատելով միմյանցից) հանրապետությունների միջև վերացրեց սահմանային գիծը, որով և պայմանավորվեց հետագա սահմանային վեճերի առկայությունը: Սահմանի հստկեցման խնդիրը, չնայած լուծման բազմաթիվ փորձերին շարունակում է լուրջ և վտանգավոր հիմնախնդիր մնալ երկու հանրապետությունների համար: Պետք է նաև ասել, որ տվյալ քաղաքականությունը ձեռնտու էր նախ ԽՍՀՄ-ին, ապա այսօր նաև Ռուսաստանին:

Հյուսիսային Կովկասում առանձին դաշնային սուբյեկտների (հանրապետությունների) առկայությունը, ինչպես նաև դրանց միջև հակասությունները հնարավորություն են տալիս տարածաշրջանի ժողովուրդներին տարանջատված պահել, որը դյուրացնում է Հյուսիսային Կովկասի նման բարդ և միևնույն ժամանակ ռազմավարական մեծ կարևորություն ունեցող տարածաշրջանում վերահսկողություն իրականցնելը: Այնուամենայնիվ հարկ է նշել, որ նման քաղաքականությունը տարածաշրջանում կարող է առաջացնել միջազգային լուրջ լարվածություններ, ըհդհուպ մինչև ՌԴ կազմում եղած սուբյեկտների միջև զինված հակամարտությունների:

**Борис Казарян, Пограничные споры между Чечней и Ингушетией (XIX в.-2018 г.).** 1921 г. Горская АССР, заменившая провозглашенную в 1918 году на Батумской международной конференции Горскую Республику, с его внутренним административным делением, заложила основу для двух автономий народа вайнах в составе РСФСР, четко разделяя их территории и границы. Впоследствии административная политика Советского Союза привела к отсутствию четкого раздела между двумя республиками, которая как проблема, продолжалось оставаться нерешенной, несмотря на многочисленные попытки уточнить границы, а общественное недовольство, возникшее после соглашения в 2018 г. о границах Чечни и Ингушетии, может быть опасно для отношений между республиками и даже есть угроза дестабилизации всего региона.

*Ключевые слова*: Чечня, Ингушетия, пограничный раздел, споры, Батумская международная конференция, Горская Республика, Горская АССР, административное деление, народ вайнах, автономия, РСФСР, Советский Союз, соглашение о границах.

**Boris Ghazaryan, Borderline contradictions between Chechnya and Ingushetia (from XIX century-2018).** During the international conference in 1918 the declared Mountain Republic was replaced by Mountain ASSR with its inner administrative divisions in 1921 put the foundations of autonomies of vainakh people as a part of RSFSR by clearly defining their territories and borderlines. Later the administrative policy of Soviet Union towards two republics led to the absence of clear borderline distinction which as a problem continued to remain unsolved despite the numerous attempts of clarifying borderlines and the public discontentment that came up, after the treaty of 2018 on the borderlines between Chechnya and Ingushetia, are full of danger of destabilizing the relationships between the countries and even the whole region.

*Key words:* Chechnya and Ingushetia, borderline division, contradictions, international conference of Batumi, Mountain Republic, Mountain ASSR, administrative division, people of vainakh, autonomy, RSFSR, Soviet Union, treaty of borderlines.